Արմեն Գևորգյան, Սեյրան Օհանյան և Յուրի Խաչատուրով

Երևան 2021

ՀՀ նախկին փոխվարչապետ Արմեն Գևորգյան

Կենսագրություն

- 1997-1998 թթ. զբաղեցրել է ՀՀ վարչապետի օգնականի պաշտոնը:
- 1998 թվականի ապրիլի 13-ից եղել է ՀՀ Նախագահի օգնական, օգոստոսից՝ ՀՀ Նախագահի առաջին օգնական, աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ:
- 2000-2006 թթ. - ՀՀ Նախագահի առաջին օգնական:
- 2006 թվականի փետրվարին նշանակվել է ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավար:
- 2007 թվականի հունիսից մինչև 2008 թ ապրիլը զբաղեցրել է նաև Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի պաշտոնը:
- 2008 թվականի ապրիլի 21-ին ՀՀ Նախագահի հրամանագրով նշանակվել է ՀՀ տարածքային կառավարման նախարար:
- 2008 թվականի ապրիլի 21-ին ՀՀ Նախագահի հրամանագրով նշանակվել է ՀՀ փոխվարչապետ:
- 2008 թվականի ապրիլի 21-ին ՀՀ նախագահի հրամանագրով ազատվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի պաշտոնից:
- 2008 թվականի ապրիլի 21-ին ՀՀ Նախագահի հրամանագրով ազատվել է Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի պաշտոնից:
- 2008 թվականի մայիսի 6-ին ՀՀ Նախագահի հրամանագրով նշանակվել է ԱՊՀ տնտեսական խորհրդի անդամ:

- 2009 թվականի հոկտեմբերի 8-ին ՀՀ Նախագահի հրամանագրով նշանակվել է Անկախ պետությունների համագործակցության հարցերով Հայաստանի Հանրապետության ազգային համակարգող:
- ՀՀ Նախագահի 2012 թվականի հունիսի 16-ի,
- 2013 թ. մայիսի 8-ին ՀՀ Նախագահի հրամանագրով վերանշանակվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարի պաշտոնում:
- 2013 թ. մայիսի 8-ին ՀՀ Նախագահի հրամանագրով վերանշանակվել է ՀՀ փոխվարչապետի պաշտոնում:
- 2014 թ. ապրիլի 26-ին ՀՀ Նախագահի հրամանագրով վերանշանակվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարի պաշտոնում:
- 2014 թվականի ապրիլի 27-ին ՀՀ Նախագահի հրամանագրով վերանշանակվել է ՀՀ փոխվարչապետի պաշտոնում:
- 2014 թվականի հոկտեմբերի 17-ին ՀՀ Նախագահի հրամանագրով ազատվել է ՀՀ փոխվարչապետի և ՀՀ տարածքային կառավարման նախարարի պաշտոններից՝ իր դիմումի համաձայն:
- 2014 թվականի դեկտեմբերի 12-ին ՀՀ նախագահի հրամանագրով ազատվել է ԱՊՀ տնտեսական խորհրդի անդամի պարտականություններից:
- 2015 թվականի փետրվարի 3-ին ՀՀ նախագահի հրամանագրով ազատվել է Անկախ պետությունների համագործակցության հարցերով Հայաստանի Հանրապետության ազգային համակարգողի պարտականություններից:
- 2016 թվականի հունիսի 6-ին ՀՀ Նախագահի հրամանագրով նշանակվել է ՀՀ ազգային անվտանգության խորհրդի քարտուղար:
- 2016 թվականի հոկտեմբերի 3-ին ՀՀ Նախագահի հրամանագրով նշանակվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավար, 2018 թվականի ապրիլի 18-ին ազատվել է զբաղեցրած պաշտոնից:
- 2018 թվականի ապրիլի 18-ին նշանակվել է ՀՀ փոխվարչապետ:

20.05.2021թ. ՀՀ նախկին փոխվարչապետ Արմեն Գևորգյանին մեղադրանք է առաջադրվել շուրջ 5 միլիարդ ՀՀ դրամի՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու համար:

ՀՀ նախկին փոխվարչապետ Արմեն Գևորգյանը, պաշտոնեական դիրքն օգտագործելով, 2004-2018 թվականների ընթացքում օրինականացրել է հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուր 4.921.302.379 ՀՀ դրամի եկամուտները:

2002-2018 թվականների ընթացքում Արմեն Գևորգյանի և նրա հետ փոխկապակցված անձանց օրինական եկամուտների հանրագումարը կազմել է ընդհանուր 743.458.821 ՀՀ դրամ, մինչդեռ վերջիններիս անվամբ նույն ժամանակահատվածում գրանցվել է Արմեն Գևորգյանին փաստացի պատկանող՝ Երևան քաղաքում և ՀՀ մարզերում գտնվող՝ վերը նշված գումարը բազմակի գերազանցող արժեքի 39 միավոր անշարժ գույքերի նկատմամբ սեփականության իրավունք:
Արմեն Գևորգյանը, պաշտոնեական դիրքը չարաշահելով, ներգործել է մի շարք մարզերի համայնքների ղեկավարների վրա՝ վերջիններիս դրդելով գործող օրենսդրության խախտմամբ՝ ձևական աճուրդներ անցկացնելու եղանակով, համայնքներին պատկանող որոշ հողատարածքների նկատմամբ սեփականության իրավունքը գրանցել իր հետ փոխկապակցված անձանց անվամբ:
Երևան քաղաքում և ՀՀ մարզերում գտնվող հիշյալ անշարժ գույքերի պայմանագրային արժեքը կազմել է 751.268.208 ՀՀ դրամ, մինչդեռ նույն անշարժ գույքերի միջին շուկայական արժեքը գործարքի կատարման ժամանակ կազմել է նշված արժեքի ավելի քան վեցապատիկը՝ 4.843.530.000 ՀՀ դրամից ավելի, իսկ Արմեն Գևորգյանի հետ փոխկապակցված անձանց անվամբ Չեխիայի Հանրապետությունում գտնվող ընդհանուր 10 միավոր անշարժ գույքերի շուկայական արժեքը կազմել է 391.920.000 ՀՀ դրամին համարժեք 920.000 ԱՄՆ դոլար:
Ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ Չեխիայի Հանրապետությունում, Արմեն Գևորգյանի հետ փոխկապակցված անձինք հիմնադրել են մի շարք ընկերություններ, որոնց անվամբ գրանցվել են անշարժ գույքեր: Բացի դրանից՝ նշված անձինք բանկային գործարքների եղանակով շրջանառել են դրամական միջոցներ, սակայն ինչպես գնված անշարժ գույքերի շուկայական արժեքների, այնպես էլ շրջանառված դրամական միջոցների հարաբերակցությունն էականորեն տարբերվել է իրենց կողմից ստացված օրինական եկամուտներից:

Բոլոր անշարժ գույքերի շուկայական արժեքի հանրագումարը գերազանցում է Արմեն Գևորգյանի և նրա հետ փոխկապակցված անձանց կողմից ստացված օրինական եկամուտները, որպիսի պայմաններում Արմեն Գևորգյանը պետական պաշտոնները զբաղեցնելու ընթացքում իրականացրած անօրինական գործունեության արդյունքում ստացված եկամուտների հանցավոր ծագումը թաքցնելու, դրանց օրինական տեսք տալու նպատակով ձեռք է բերել և փոխկապակցված անձանց անուններով գրանցել հիշյալ անշարժ գույքերը, ինչպես նաև դրանց գնման դիմաց վճարված իրական արժեքները թաքցնելու եղանակով օրինականացրել (լվացել) է 4.100.071.179 ՀՀ դրամ և 391.920.000 ՀՀ դրամին համարժեք 920.000 ԱՄՆ դոլար:
Բացի դրանից՝ Արմեն Գևորգյանը, նպատակ ունենալով թաքցնել և խեղաթյուրել հանցավոր ճանապարհով ստացված կանխիկ գումարների ծագումը, ինչպես նաև դրանք տարբեր բանկային գործարքների արդյունքում շրջանառելուց հետո ներկայացնել որպես օրինական ստացված եկամուտներ, դրանք շրջանառել է փոխկապակցված անձանց անձնական և նրանց անվամբ գրանցված տարբեր կազմակերպությունների բանկային հաշիվներով:

Փաստացի՝ Արմեն Գևորգյանը հանցավոր ճանապարհով ստացել և օրինականացրել է ընդհանուր 4.921.302.379 ՀՀ դրամ, որի համար վերջինիս մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով:
Թիվ 62202608 քրեական գործի շրջանակներում փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ «ԷՐԷՄԻԷՆԵՐՋԻ», «Վ.Ա.Լ. ԷՆԵՐԳՈ» և «ԷՅՉ ԱՅՈՒԱՅ» ՍՊ ընկերությունները, որոնք գործունեություն են ծավալում հիդրոէներգետիկայի և հյուրանոցային ծառայությունների մատուցման բնագավառում, փաստացի հիմնադրվել և պատկանում են ՀՀ նախկին փոխվարչապետ Արմեն Անդրանիկի Գևորգյանին: Հիշյալ ընկերությունների կողմից փոքր հիդրեէլեկտրակայաններ կառուցելու համար ՀՀ Սյունիքի մարզի Լեռնաձոր ու Քարահունջ և ՀՀ Տավուշի մարզի Վերին Կարմիրաղբյուր համայնքներում ձեռք բերելու համար արմեն Գևորգյանն իր պաշտոնից բխող հեղինակությունն օգտագործելով ներգործել է հիշյալ համայնքների ղեկավարների վրա՝ վերջիններիս դրդելով գործող օրենսդրության խախտմամբ հիշյալ համայնքներին պատկանող որոշ հողատարածքներ վարձակալության իրավունքով հանձնել նշված ընկերություններին:

2006-2016թթ. ընթացքում Արմեն Գևորգյանի հետ փոխկապակցված անձանց անվամբ սեփականության իրավունքով հաշվառվել են

- քաղաք Երևան, Տերյան 66 շենք, թիվ 71 բնակարանը,
- քաղաք Երևան, Տերյան 66 շենք, թիվ 35,37,43,50 ավտոկայանատեղիները,
- քաղաք Երևան, Տերյան 66 շենք, թիվ 1 և 2 հասարակական նշանակության տարածքները,
- քաղաք Երևան, Հյուսիսային պողոտա շենք 3, թիվ 40 բնակարան
- քաղաք Երևան, Հյուսիսային պողոտա շենք 3, թիվ 41 բնակարան
- քաղաք Երևան, Հյուսիսային պողոտա շենք 3, թիվ 42 բնակարան
- քաղաք Երևան, Հյուսիսային պողոտա շենք 3 թիվ 95,96,97,98,103,104 ավտոկայանատեղիները,
- քաղաք Երևան, Աբովյան փողոց շենք 8, թիվ 22 բնակարանը,
- քաղաք Երևան, Աբովյան փողոց շենք 8, թիվ 4 ավտոկայանատեղին,
- քաղաք Երևան, Կիևյան փողոցի 14/3 շենքի թիվ 60 բնակարանը
- քաղաք Երևան, Կիևյան փողոցի 14/3 շենքի թիվ 3 ավտոկայանատեղին,
- քաղաք Երևան, Հին Երևանցու փողոց 2 շենքի 10 բն. և թիվ 92 ավտոկայանատեղին,
- ՀՀ Կոտայքի մարզի համայնք Քարաշամբ 6րդ փողոց թիվ 2/1 հողատարածքը,
- ՀՀ Կոտայքի մարզի համայնք Քարաշամբ Ամառանոցային 6րդ փողոց թիվ 4/1 հողատարածքը,
- ՀՀ Կոտայքի մարզի համայնք Քարաշամբ 7րդ փողոցի 1 նրբանցքի թիվ 1/1 հողատարածքը,
- ՀՀ Կոտայքի մարզի համայնք Քարաշամբ 14-րդ փողոցի թիվ 13 հողատարածքը
- ՀՀ Կոտայքի մարզի համայնք Քարաշամբ14-րդ փողոցի թիվ 14 հողատարածքը
- ՀՀ Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի 8,3 հա , 1.62 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատարածքները,
- ՀՀ Կոտայքի մարզի համայնք Նոր Արտամետ 7.4 հա, 3.8 հա մակերեսով այգիները,
- Ծաղկաձոր համայնք Տանձաղբյուրի փողոցի թիվ 4/40 հանգստավայրը,
- ՀՀ Տավուշի մարզի քաղաք Դիլիջան Սարալանջի փողոց թիվ 26 հողամասը

1997-2018թթ. Արմեն Գևորգյանը զբաղեցրել է պետական տարբեր պաշտոններ, այդ թվում ՀՀ նախագահի և ՀՀ վարչապետի օգնականի, ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի, ՀՀ տարածքային կառավարման նախարարի և ՀՀ փողվարչապետի պաշտոնները: ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից

ստացված տեղեկությունների համաձայն Արմեն Գևորգյանը որևէ ընկերության մասնակից կամ անհատ ձեռնարկատեր չի հանդիսացել:

2008թ. սկսած ՀՀ նախկին փոխվարչապետ Արմեն Գևորգյանի հետ փոխկապակցված անձանց կողմից Չեխիայի Հանրապետությունում ստեղծված և ղեկավարվող « Rubendyan Holding s.r.o.», «Rubendyan City s.r.o.», «Rubendyan Invest s.r.o.» և «Qftoma s.r.o» ընկերությունների հաշվեհամարներով, ընդհանուր հաշվարկով շրջանառվել է շուրջ 20 միլիոն եվրո գումար, ինչն էականորեն գերազանցել է Արմեն Գևորգյանի և վերջինիս հետ փոխկապակցած անձանց օրինական եկամուտները, որպիսի գործողություններով Արմեն Գևորգյանն իր հետ փոխկապակցված անձանց միջոցով նպատակ է ունեցել թաքցնել և խեղաթյուրել այդ գույքերի հանցավոր ծագումը:

Այս ամենի կապակցությամբ 16.04.2020թ. հարուցվել է թիվ 62209320 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 308րդ հոդվածի 1ին մասով, 38-308րդ հոդվածի 1ին մասով և 190րդ հոդվածի 3րդ մասի 1ին կետով:

Արցախի և Հայաստանի պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյան

Կենսագրություն

Կրթությունը

- 1979թ.՝ ավարտել է Հայկական ՍՍՀ Նաիրիի շրջանի Մրգաշեն գյուղի միջնակարգ հանրակրթական դպրոցը:
- 1983թ.՝ ավարտել է Բաքվի համազորային հրամանատարական ռազմական բարձրագույն ուսումնարանը:

Աշխատանքային գործունեություն

- 1983–1988թթ.՝ ծառայել է Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունում տեղակայված ԽՍՀՄ զորախմբում որպես մոտոհրաձգային դասակի, ապա՝ վաշտի հրամանատար:
- 1988 թ. հուլիսին տեղափոխվել է Անդրկովկասյան զինվորական օկրուգ և նշանակվել Ստեփանակերտ քաղաքում տեղակայված 366-րդ գվարդիական մոտոհրաձգային գնդի մոտոհրաձգային վաշտի հրամանատարի պաշտոնին:
- 1989 թ. օգոստոսին նշանակվել է նույն գնդի մոտոհրաձգային գումարտակի հրամանատարի տեղակալի, իսկ 1990 թ. սեպտեմբերին՝ մոտոհրաձգային գումարտակի հրամանատարի պաշտոնին:
- 1992թ. մարտ- դեկտեմբեր՝ Ստեփանակերտում կազմավորված հայկական առանձին մոտոհրաձգային գնդի հրամանատար:
- 1992թ. դեկտեմբեր – 1993թ.՝ ԼՂՀ ՊԲ հրամանատարի առաջին տեղակալ:
- 1993–1994թթ.՝ ԼՂՀ ՊԲ շտաբի պետ:
- 1994–1998թթ.՝ ԼՂՀ ՊԲ հրամանատարի առաջին տեղակալ:

- 1998–1999թթ.՝ ՀՀ ԶՈՒ նորաստեղծ 5-րդ բանակային զորամիավորման հրամանատար:
- 1999թ. օգոստոսից ստանձնել է ԼՂՀ պաշտպանության նախարարի, իսկ 2000թ. հունվարից՝ նաև Պաշտպանության բանակի հրամանատարի պաշտոնները:
- 2005-2007թթ. ղեկավարել է «Արցախի ազատամարտիկների միություն» հասարակական կազմակերպությունը:
- 2007թ. մայիսին նշանակվել է ՀՀ ԶՈՒ Գլխավոր շտաբի պետ:
- 2008թ. ապրիլին նշանակվել է ՀՀ պաշտպանության նախարար:

Սեյրան Մուշեղի Օհանյանի անվամ ՀՀ տարածքում սեփականության իրավունքով գրանցված անշարժ գույքերը՝

- 19.06.2000թ. ՀՀ Կոտայքի մարզ, համայնք Մրգաշեն 07-046-0114-0004 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասի նկատմամ գրանցված է սեփականության իրավունք:
- 19.05.2000թ. ՀՀ Կոտայքի մարզ, համայնք Մրգաշեն 07-046-0114-0007 կադաստրային ծածկագրով տնամերձ հողամասի նկատմամ գրանցված է սեփականության իրավունք:
- 02.06.2000թ. ՀՀ Կոտայքի մարզ, համայնք Մրգաշեն 07-046-0114-0005 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասի նկատմամ գրանցված է ընդհանուր համատեղ սեփականության իրավունք:
- 16.10.2003թ. ՀՀ Կոտայքի մարզ, Մրգաշեն 6 փողոց թիվ 18 / ներկայիս հասցեն՝ 6 փողոց 38/ բնակելի տուն հասցեի անշարժ գույքի նկատմամ գրանցված է ընդհանուր համատեղ սեփականության իրավունք:
- «Վերածնունդ» հիմնադրամը

Ռուզաննա Գուրգենի Խաչատրյանի անվամ ՀՀ տարածքում սեփականության իրավունքով գրանցված անշարժ գույքերը՝

- 29.09.2002թ. ՀՀ ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Ռուբինյանց փողոց 1 շենք, թիվ 1 բնակարանի նկատմամ գրանցված է ընդհանուր համատեղ սեփականության իրավունք: 03.07.2012թ. վերագրանցվել է ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով:
- 04.11.2005թ. ՀՀ ք. Երևան, Կենտրոն, Նալբանդյան փողոց 98 շենք, թիվ 4 բնակարանի նկատմամ գրանցված է սեփականության իրավունք:
- 20.07.2004թ. ՀՀ ք. Երևան, Արաբկիր, Կոմիտաս փողոց 65 շենք, թիվ 86 բնակարանի նկատմամ գրանցված է եղել սեփականության իրավունք, որն օտարվել է 28.12.2004թ. Նելլի Հրանտի Չխրոյանին և Սամվել Խաչատրյանին:
- «Ռուզաննա Խաչատրյան Գորգենի» Ա/Ձ-ն
- «Զինվորական բժիշկների հայկական ասոցիացիա» առողջապահական հասարակական կազմակերպությունը

ՀՀ ՊՆ նախկին նախարար՝ Սեյրան Օհանյանը առանձնատուն ունի, որը 5-7 մլն դոլարի կադաստրային արժեք ունի: Այս առանձնատունը կառուցված է Փարիզի Ելիսեյան պալատի նախագծով և սկսել է կառուցվել 2016 թ-ից, հետո բավական երկար ժամանակ վերանորոգվել է, ի դեպ, այն տարին երբ Սեյրան Օհանյանը դեռ Պաշտպանության նախարար էր: Թե ի՞նչ միջոցներով էր նախարարը 350-400 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ այս առանձնատունը կառուցում պարզ չէ: Սակայն Սեյրան Օհանյանը հայտարարում է, թե Վահագնի թաղամասի առանձնատներից մեկը ոչ թե իր սեփականությունն է, այլ ինքն այնտեղ վարձով է ապրում: Վահագնի թաղամասում առանձնատների ամսական վարձակալության գումարը սկսվում է 3000

դոլարից: Իհարկե սա նրան պատկանող միակ առանձնատունը չէ, ևս մեկը՝ կրկին շքեղ ու թանկարժեք, ունի Սևանա լճի ափին:

Մեյրան Օհանյանի առանձնատուն

Փարիզի Ելիսեյան պալատ

Ռուզաննա Խաչատրյանի հաշիվներին կանխիկ ելքերն ու մուտքերը գերազանցում են տասնյակ միլիոնները:

Ազգային ժողովի պատգամավոր, գեներալ Մանվել Գրիգորյանի նկատմամբ ԱԱԾ սկանդալային բացահայտումներից հետո, ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան

Օհանյանն ակտիվ գործողություններ էր սկսել: Նա զբաղված էր իր անվամբ գրանցված սեփականության իրավունքի վկայականներն անվանափոխելով:

Կինը՝ Ռուզաննան, ով միշտ աչքի է ընկել իր նորաոճ թանկարժեք հագուստներով, զարդերով, և նորաձևության ոչ մի թրենդից հետ չմնալով, այսքանից հետո դեռ դավաճաններ է փնտրում, հող ծախողներ ու բանակ թալանողներ: Եվ այս անգամ էլ քաղաքական թրենդից հետ չմնալու համար նա պահանջում է վարչապետի հրաժարականը:

Ահա այսպես տարիներ շարունակ ամեն գնով «պահել են» Արցախն ու բանակը

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության նախկին քարտուղար Յուրի Խաչատուրով

Կենսագրություն

Կրթությունը

- 1969 թ. - ավարտել է Թեթրի-Ծղարոյի միջնակարգ դպրոցը:
- 1974 թ. - գերազանցությամբ ավարտել է Կարմիր դրոշի շքանշանակիր Թբիլիսիի հրետանային հրամանատարական ուսումնարանը:
- 1982 թ. օգոստոսից մինչև 1985 թ. հունիսը - Լենինգրադի Մ.Ի.Կալինինի անվան ռազմական հրետանային ակադեմիայի հրամանատարական ֆակուլտետի ունկնդիր:

Զինվորական ծառայությունը

- 1974 թ. նշանակվել է Հեռավորարևելյան զինվորական օկրուգի մոտոհրաձգային դիվիզիայի հրետանային գնդի կրակային դասակի հրամանատարի պաշտոնին:
- 1976-1982 թթ. Հեռավորարևելյան զինվորական օկրուգում զբաղեցրել է մարտկոցի հրամանատարի, հրետանային դիվիզիոնի հրամանատարի տեղակալ-շտաբի պետի, առանձին հակատանկային հրետանային դիվիզիոնի հրամանատարի պաշտոններ:
- 1985-1987 թթ. - Բելառուսի զինվորական օկրուգում տանկային դիվիզիայի հրթիռային զորքերի և հրետանու շտաբի պետի պաշտոնին:
- 1987 թ. - 1989 թ. փետրվար - ծառայել է Աֆղանստանում՝ 40-րդ բանակի 5-րդ գվարդիական մոտոհրաձգային դիվիզիայի հրթիռային զորքերի և հրետանու շտաբի պետի պաշտոնում:

- 1989 թ. հոկտեմբերին նշանակվել է Բելառուսի զինվորական օկրուգի տանկային բանակի առանձին հրետանային բրիգադի հրամանատարի պաշտոնին:
- 1992 թ. ապրիլին Բելառուսի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով գործուղվել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության տրամադրության տակ և նշանակվել 2-րդ մոտոհրաձգային գնդի հրամանատարի պաշտոնին: Ակտիվորեն մասնակցել է ՀՀ պետական սահմանի պաշտպանությանը և Լեռնային Ղարաբաղում մարտական գործողություններին:
- 1992 թ. սեպտեմբերից - ՀՀ սահմանապահ զորքերի վարչության պետ-ՀՀ զինված ուժերի հրամանատարի տեղակալ:
- Անձամբ մասնակցել է Գորիսի մոտոհրաձգային գնդի, Տավուշի մոտոհրաձգային բրիգադի, 1-ին և 4-րդ բանակային կորպուսների ձևավորմանն ու կայացմանը, երկար տարիներ ղեկավարել է այդ զորամասերը, միավորումները և խմբավորումները: Զբաղեցրել է նաև օպերատիվ ուղղության հրամանատարի և ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալի պաշտոնները:
- 2000 թ. մարտի 21-ին ՀՀ Նախագահի հրամանագրով նշանակվել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ:
- 2008 թ. ապրիլի 15-ին ՀՀ Նախագահի հրամանագրով նշանակվել է ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ-պաշտպանության նախարարի առաջին տեղակալ:
- 2009 թ. հունվարի 31-ին ՀՀ Նախագահի հրամանագրով նշանակվել է ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ՝՝ ազատվելով Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետ-պաշտպանության նախարարի առաջին տեղակալի պաշտոնից:
- 2013 թ. օգոստոսի 5-ին ՀՀ Նախագահի՝ հրամանագրով զինվորական ծառայությունը 2013 թ. հուլիսի 30-ից երկարաձգվել է մինչև 2017 թ. մայիսի 1-ը:
- 2016 թ. հոկտեմբերի 3-ին ՀՀ Նախագահի հրամանագրով նշանակվել է ՀՀ Ազգային Անվտանգության Խորհրդի քարտուղար՝ ազատվելով ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի պաշտոնից:
- 2017 թվականի ապրիլի 14-ին Ղրղզստանում կայացած ՀԱՊԿ ոչ պաշտոնական գագաթնաժողովի ժամանակ մայիսի 2-ից նշանակվել է ՀԱՊԿ Գլխավոր քարտուղար:

Յուրի Գրիգորի Խաչատուրովի անվամ ՀՀ տարածքում սեփականության իրավունքով գրանցված անշարժ գույքերը՝

- ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ «Կարմիր հողեր» տարածքում 02-001-0567-0013 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասի նկատմամբ գրանցված է Յուրի Խաչատուրովի և Սվետլանա Սավովի Խաչատուրովայի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:
- ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ «Կարմիր հողեր» տարածքում 02-001-0567-0011 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասի նկատմամբ գրանցված է Յուրի Խաչատուրովի և Սվետլանա Սավովի Խաչատուրովայի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:

Յուրի Խաչատուրովի կողմից օտարված անշարժ գույքի միավորներն են՝

- ՀՀ ք. Երևան, Կենտրոն, Նալբանդյան փողոց 98 շենք թիվ 9 տարածք հասցեի նկատմամբ գրանցված է եղել Յուրի Խաչատուրովի և Սվետլանա Սավովի Խաչատուրովայի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը, որն օտարվել է Իգոր Յուրիի Խաչատուրովին:
- 22.09.2003թ. ՀՀ ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Ազատության Պողոտա 2բ շենք թիվ 9,10 բնակարանի նկատմամբ գրանցված է եղել սեփականության իրավունքը, որն օտարվել է 21.01.2008թ-ին Տիգրան Սաշայի Բիշարյանին և Արևհատ Հայկարամի Մխիթարյանին:
- 29.03.2003թ. ՀՀ ք. Երևան, Կենտրոն, Մոսկովյան փողոց 37 շենք թիվ 28 բնակարանի նկատմամբ գրանցված է եղել Յուրի խաչատուրովի և Սվետլանա Սավովի Խաչատուրովայի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը, որն օտարվել է 16.03.2004թ. Գրիգորի Յուրիի Խաչատուրովին:
- 12.12.2001թ. ՀՀ ք. Երևան, Կենտրոն, Նալբանդյան փողոց թիվ 98 շենքի թիվ 1 ավտոտնակի նկատմամն նկատմամբ գրանցված է եղել Յուրի խաչատուրովի և Սվետլանա Սավովի Խաչատուրովայի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը, որն օտարվել է 18.06.2011թ. Գոհարիկ Յուրիի Մինասյանին:
- 08.07.2002թ. ՀՀ ք. Երևան, Սարկավագի 54/6 շենք թիվ 4 բնակարանի նկատմամբ գրանցված է եղել Յուրի Խաչատուրովի, Սվետլանա Խաչատուրովայի, Դենիս Խաչատուրովի, Գրիգորի Խաչատուրովի և Իգոր Խաչատուրովի համատեղ

սեփականության իրավունքը, որն օտարվել է 18.02.2003թ. Անժելա և Միքայել Աստվածատուրյաններին:

- 14.07.2005թ. ՀՀ ք. Երևան, Կենտրոն, Մոսկովյան փողոց 37 շենքի բակում գտնվող ավտոտնակի նկատմամբ գրանցված է սեփականության իրավունքը:
- 23.02.2006թ. ՀՀ ք. Երևան Քանաքեռ-Զեյթուն, Ազատության պողոտա 2բ շենքի մոտ գտնվող ավտոտնակի նկատմամբ գրանցված է սեփականության իրավունքը:

Սվետլանա Խաչատուրովայի անվամբ գրանցված և հետագայում օտարված անշարժ գույքի միավորներն են՝

- 16.06.2003թ. ՀՀ ք. Երևան, Կենտրոն, Թումանյան փողոց 21 շենք թիվ 1/7 տարածքի նկատմամբ գրանցված է եղել սեփականության իրավունքը, որն օտարվել է 15.04.2013թ. Տիգրանուհի Ռաֆիկի Տիգրանյանին:

Նշված անշարժ գույքի նկատմամբ գրանցված է եղել՝

1.«Սատուրն Սեթ» ՍՊԸ-ի վարձակալության իրավունքը:
2.«Արթ-Վայն» ՓԲԸ-ի վարձակալության իրավունքը:
3.Ա/Ձ Գնել Հարությունյանի վարձակալության իրավունքը: Պայմանագիրը դադարել է 23.04.2007թ. համաձայնագրի հիման վրա:
4.«Զանթիա» ՍՊԸ-ի վարձակալության իրավունքը: Պայմանագիրը դադարել է 10.03.2009թ. համաձայնագրի հիման վրա:
5.«Ռուդիի Խաղալիքներ» ՍՊԸ-ի վարձակալության իրավունքը: Պայմանագիրը դադարել է 27.08.2012թ. համատեղ դիմումի հիման վրա:
6.«Թայմլես» ՍՊԸ-ի վարձակալության իրավունքը: Պայմանագիրը դադարել է 27.08.2012թ. համատեղ դիմումի հիման վրա:

- 09.11.2012թ. ՀՀ ք. Երևան, Կենտրոն, Արամի 82 և 84 շենք թիվ 56 ավտոտնակի նկատմամբ գրանցված է եղել սեփականության իրավունքը, որն օտարվել է 10.10.2014թ Դենիս Յուրիի Խաչատուրովին:

- 16.06.2003թ. ՀՀ ք. Երևան, Կենտրոն, Թումանյան 21 շենք տարածք /վկ.1012878/ նկատմամբ գրանցված է եղել սեփականության իրավունքը, որն օտարվել է 16.12.2003թ. Կլարա Իրիցյանին:

Գրիգորի Յուրիի Խաչատուրովի անվամ ՀՀ տարածքում սեփականության իրավունքով գրանցված անշարժ գույքերը՝

- 16.03.2004թ. ՀՀ ք. Երևան, Կենտրոն, Մոսկովյան փողոց 37 շենք թիվ 28 բնակարան և ձեռնահարկ հասցեի անշարժ գույքի նկատմամբ գրանցված է սեփականության իրավունքը:
- 17.08.2016թ. ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Նժդեհի փողոց 2 շենք թիվ 10 բնակարանի նկատմամբ գրանցված է ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:

Իգոր Յուրիի Խաչատուրովի անվամ ՀՀ տարածքում սեփականության իրավունքով գրանցված անշարժ գույքերը՝

- 29.08.2012թ. ՀՀ ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Ազատության պողոտա 16 շենք թիվ 82 շինության նկատմամբ գրանցված է սեփականության իրավունքը: Նշված անշարժ գույքի նկատմամբ գրանցված է «Մարլի» ՍՊԸ-ի վարձակալության իրավունքը:
- 29.08.2012թ. ՀՀ ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Ազատության պողոտա 16 շենք թիվ 83 շինության նկատմամբ գրանցված է սեփականության իրավունքը: Նշված հասցեի անշարժ գույքի նկատմամբ գրանցված է «Մարլի» ՍՊԸ-ի վարձակալության իրավունքը:
- 27.04.2017թ. ՀՀ ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Ազատության պողոտա 16 շենք թիվ 86 շինության նկատմամբ գրանցված է սեփականության իրավունքը:
- 26.12.2006թ. ՀՀ ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, ազատության պողոտա 16 շենք թիվ 87 շինության նկատմամբ գրանցված է եղել սեփականության իրավունքը, որն օտարվել է 06.04.2017թ. Լևոն Աշոտի Ավետիսյանին: 25.07.2017թ. նշված հասցեի անշարժ գույքի միավորի նկատմամբ գրանցված է Իգոր Խաչատուրովի սեփականության իրավունքը:
- 24.07.2014թ. ՀՀ ք. Երևան, Կենտրոն, Նալբանդյան փողոց 98 շենք թիվ տարածքի նկատմամբ գրանցված է սեփականության իրավունքը:
- 17.01.2013թ. ՀՀ ք. Երևան, Կենտրոն, Նալբանդյան փողոց 98 շենք թիվ 13 բնակարան և նկուղ հասցեի նկատմամբ գրանցված է սեփականության իրավունքը:
- 01.12.2003թ. ՀՀ Կոտայքի մարզ, Ջրվեժ այգեգործական զանգված 23-րդ թաղամաս թիվ 4 այգետնակի նկատմամբ գրանցված է սեփականության իրավունքը:

2009 թվականից ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի պաշտոնն զբաղեցնող Յուրի Խաչատուրովը Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով է ներկայացրել միայն 2014 եւ 2015 թվականների եկամուտների եւ ունեցվածքի հայտարարագիրը, մինչդեռ «Հանրային ծառայության» մասին ՀՀ օրենքի հայտարարագիր ներկայացնելու պահանջն ավելի վաղ է ուժի մեջ մտել: Ըստ այդմ, Յուրի Խաչատուրովն առնվազն մի քանի տարվա հայտարարագիր չի ներկայացրել (Օրինակ՝ Սերժ Սարգսյանն ու Հովիկ Աբրահամյանն իրենց եկամուտներն ու ունեցվածքը հայտարարագրել են 2011 թվականից):

Յուրի Խաչատուրովի ներկայացրած երկու հայտարարագրերում էլ նշված է միայն 2014 եւ 2015 վականներին նրա ունեցած դրամական միջոցների եւ եկամուտների մասին տեղեկությունները, որից պարզ է դառնում է, որ նա 2014-ին ունեցել է 6 հազար եվրո, 12 հազար ԱՄՆ դոլար եւ 4 միլիոն դրամ, իսկ 2015-ին՝ 7 հազար եվրո, 16 հազար ԱՄՆ դոլար

եւ 5 միլիոն դրամ, իսկ միակ եկամուտը եղել է աշխատավարձը՝ մոտ 12 միլիոն դրամ (տարեկան):
Գլխավոր շտաբի պետի տղայի՝ Գրիգորի Խաչատուրովի հայտարարագիրը Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի շտեմերանում չկա, քանի որ ՀՀ ՊՆ բոլոր բանակային կորպուսների ղեկավարների հայտարարագրերը ներկայացված չեն:

Յուրի Խաչատուրովը 2016 թվականի մայիսի 28-ին լրագրողների հետ զրույցում հայտարարել էր, որ իր բնակարանը վաճառել է եւ առանձնատուն է կառուցել: Ինչպես տեսնում ենք, Խաչատուրովը կամ իր առանձնատունն այլ անձի անունով ձեւակերպել կամ լրագրողների հետ զրույցում կեղծ տեղեկություն է տրամադրել: Նշենք, որ այս տարի կայքերից մեկը հրապարկել էր Խաչատուրովի՝ Կոտայքի մարզում գտնվող երկհարկանի շքեղ առանձնատունը:
ՁՈՒ գլխավոր շտաբի պետի անվան հետ է կապվում մայրաքաղաքի Արաբկիր վարչական շրջանում գտնվող «Էյֆե» բիլիարդ-ակումբը, որի մասին մամուլի հրապարակումները մինչ օրս չի հերքվել Խաչատուրովի կողմից: Մեզ հայտնի դարձավ, որ «Էյֆե» բիլիարդ-ակումբը պատկանում է «Էյֆե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերութանը, որի միակ հիմնադիրը՝ Պետրոս Ջուլֆայանը, այն հիմնադրել է 2007 թվականին, երբ ընդամենը 22 տարեկան էր: Ջուլֆայանն էլ համարվում է ակումբի տնօրենը: